ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2013թ. N 141-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ,,ԻՋԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԱՄԱԶ 43118-1017-13 ՄԱԿՆԻՇԻ 007 ԼՍ 57 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Բաժնետիրական ընկերությունների մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ,,Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին'' ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի ,,ժբ'' ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով ,,Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ 118 գրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Թույլատրել ,,Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերությանը աճուրդային կարգով օտարելու ընկերության հաշվեկշռում գտնվող Կամազ 43118-1017-13 մակնիշի 007 ԼՍ 57 պետհամարանիշի ավտոմեքենան:
2. ,,Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության աճուրդի ներկայացված Կամազ 43118-1017-13 մակնիշի 007 ԼՍ 57 պետհամարանիշի ավտոմեքենայի մեկնարկային գինը սահմանել 12.11.2013թ. դրությամբ գնահատված շուկայական արժեքը /հիմքը՝ Երևանի քաղաքապետարանի ,,Հողի և ունեցվածքի գործառնություններ'' ՓԲԸ-ի 12.11.2013թ. թիվ 212ԳԲ հաշվետվությունը/ 2025000 դրամ:
3. Տրանսպորտային միջոցը չվաճառվելու դեպքում կազմակերպել նոր աճուրդներ, մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցնելով նախորդ աճուրդի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի քան գնահատված արժեքի 20 տոկոսը:
4. Ընկերության տնօրենին՝ հիմնական միջոցի օտարումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մարզպետարանի ներկայացուցչի մասնակցությամբ:
5. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

15 նոյեմբերի 2013թ.
Ք. Իջևան